

ԱՐՅԱՆ, ԽԱՉԵՆ(Թ), ՂԱՐԱԲԱՂ
ՎԱՐՉԱՄԱՇԽԱՐԱԳՐԱԿԱՆ
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉԱԿՅՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ

Ժ. Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ դասական մատենագրության աղբյուրներում, որքան թույլ են տալիս ուսումնասիրությունները, Արցախ (ավելի ճիշտ՝ Արծախ կամ Արդախ) անվանվում է Հայոց Արեւելից կողմանց (Հայոց Աղվանքի) միայն մի տեղաշրջանը: Ավելի ուշ շրջանի հեղինակները, հատկապես Մ. Կադանկատվացին, նույնիսկ հստակ գաղափարում են «Արցախ» եւ «Աղվանք» տեղանունները, սակայն առանց որեւէ մանրամասնությունների: Հավանական է, որ այդ կարիքն այնքան էլ չի զգացվել, միջնադարյան հեղինակներին հստակնալի է եղել, որ Արցախը Աղվանքի՝ Հայոց Արեւելից կողմանց մի մասն է, երբեք՝ զավառ, ուստի, նրանք բավարարվել են այդքանով:

Այդ դեպքում, սակայն, ինչու՞ են նրանք տարբերակել *Արցախը* եւ *Աղվանքը*: Երեւի նման ընկալումը ծագել է մարգարանական Հայաստանի վարչատարածքային բաժանման տրամաբանությունից: Բացառված չէ, որ 428 թ. Հայաստանում Արշակունիների թագավորության անկումից հետո Աղվանքը (Կողմանք Արեւելից Հայոց աշխարհի) բաժանվել է երկու մասի. նահանգի լեռնային շրջանները, թվում է, Սյունիքի հետ միասին մտել են, պայմանականորեն ասենք, Արարատյան, իսկ հարթավայրային գավառները՝ Աղվանքի մարզպանության կազմի մեջ:

Ուստի, երբ հայ պատմիչները նշում են *Աղվանք* եւ *Արցախ* անվանումները միաժամանակ, նկատի են ունենում վարչական՝ վերը ննթագրված բաժանումը:

5-րդ դարի հեղինակները (Բյուզանդ, Եղիշե) այն նշում են «Արծախ» ձևով, իսկ «Արցախ» գրությունն ավելի ուշ շրջանի (երեւի՝ սկսած կադանկատվացուց) երևույթ է: Նշվում է նաեւ տեղաշրջանի մեկ այլ անվանում «Արդախ»: Թվում է, որ այս վերջինն ավելի ճիշտ է. եթե համեմատենք, որ ժամանակակից պատմագրությունը, նկատի ունենալով ուրարտական սեպագրերը, ընդունում է, թե երկրատար նախապես կրել է «Ուրդիսեն» անունը, ապա այս պարագայում «Արդախ»-ը խիստ նմանվում է ուրարտերեն հնչարտաբերմանը: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» աշխատության մեջ կա «թախ»¹ արմատի հետեւյալ ստուգաբանությունը. «պարսկերեն, հնդկական խաշար արմավենի», իսկ այնուհետեւ՝ «պատահական նմանություն ունի պարսկերեն տա» բառի հետ, որ նշանակում է անպտուղ լեռնային մի ծառ, որի փայտը ընտիր վառելիք է»:

Նույն տեղում Հր. Աճառյանը, ստուգաբանելով «թխիկ» բառը, վերջինիս ավելի ճիշտ ձև է համարում «դխիկ»՝ արտաբերումը՝ առանց, սակայն, մեկնաբանության:

«Հնարավոր է՝ վերոգրյալ «թախ» արմատն ստուգաբանելիս Աճառյանը՝ պատահական նմանություն ունի պարսկերեն տա բառի հետ, որ նշանակում է անպտուղ լեռնային ծառ. «ենթադրությունն անում է դիպվածաբար: Եվ շուտ հավանական է, որ «թախ»-ը հենց նույն «թխիկ» ծառատեսակը նշող բառի արմատն է՝ թախ՝ կենի-թախկենի-թխիկ հնչյունափոխական զարգացմամբ: Իսկ եթե ընդունենք, որ ավելի ճիշտ (հավանաբար՝ նախնական) արտաբերմանը պետք է ասել «դխիկ», որքան, «թախ» արմատի սկզբնական պիտի լինեք «դախ»-ը: Այսպիսով՝ «Արցախ» տեղանվան վաղնջական ձևը կարելի է համարել «Արդախ»-ը, որն, ակնհայտորեն կազմված է երկու «ար» եւ «դախ» բաղադրիչներից: Տեսանք,

1. Հր. Աճառյան «Հայերենի արմատական բառարան», Հ. II, Երևան, 1973թ., էջ 140

որ «դախ»-ը կարող է նշանակել «լեռնային անպտուղ ծառ, որի փայտը հրաշալի վառելիք է»: Կարելի է ներառացվել, որ «դախ» (հետագայում՝ ծախ, գախ) արմատն ընդհանրապես պարունակել է «անտառ» իմաստը: Նման ենթադրության համար ինքը կարող է հանդիսանալ երկու նկատառում.

ա. Արցախ տեղանվան համար հայ պատմիչները թնութագրական են համարել նրա ոչ միայն դժվարատնելիությունը, այլեւ անտառներով հարուստ լինելը՝ «թանձրամայրի»: Թվում է, թե այս թնութագրումը՝ «թանձրամայրի», ունի նաեւ Արցախ բառի բացատրության արժեք:

բ. Ժողովրդական ստուգաբանության Արցախը համարվում է հայոց Արա Գեղեցիկ թագավորի անուն՝ Ար(ա) + ցախ: Բացառված չէ, որ այս մեկնությունն ավանդաբար փոխանցվել են հատել է մինչև մեր օրերը: Այս բացատրությունը հնարավոր է ընդունել նաեւ այլ տարբերակով՝ ավանդաբար Կողմանք Արեւելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքը համարվում է առասպելական Առաքի տիրույթ: Այդպես է ներկայացնում Նարեկացին: Հետագա դարերի պատմագրությունը նույն ընդհանուր տարածքի մի մասն անվանում է «Դաշուն Առանայ»՝ Առանի դաշտ կամ Արունթը<Աղվանք>:

Այս տրամաբանությամբ նահանգի լեռնային (անտառաշխիտ) տարածքն էլ կարող էր անվանվել իբրեւ Առանի անտառ՝ Առան (ա) + դախ (ծախ)<ցախ>: Հայերենում ա ծայնավորից հետո $n < p$ հնչյունափոխությունը բավական տարածված է: Օրինակ՝ Աճառյան «Հայերենի արմատական բառարան»-ում «արալեզ»-ի սկզբնական ձևն է համարվում «առլեզ»-ը: Ծառ հավանական է, որ Առանաղախ բարդության մեջ էլ տեղի ունեցած լինի հնչյունափոխություն՝ «Արդախ» բառի

արտասանության բարենչյան գերակայությամբ: Նույն կերպ էլ, թերևս, Դաշտն Առանայ հարադրության առաջին մարզ դուրս է մնացել գործածությունից. իսկ երկրորդը, հնչյունավորության ննթարկվելով, դարձել Աղուանք:

Հետևաբար կողմանք Արեւելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքը վաղնջական ժամանակներից ընկալվել է երկու բնութագրիչներով՝ անտառուտ մասն ու դաշտային: Առաջինն անվանվել է Առանի անտառ<Արցախ<Արցախ, երկրորդը՝ Աղուանք, ուշ միջնադարում՝ Արան:

Ծանոթություն. Մարտակերտի շրջանի վանք գյուղի շրջակայքում, որտեղ տեղորոշվում է հոխանաբերը, ինչպես նաև Դարգասնոր իշխանական նստավայրը, հայտնի է Աթախ հնավայրը, որը, թվում է, Արդախ-ի ժողովրդական անվանումն է:

Միջնադարյան հայ պատմագրության մեջ կողմանք Արեւելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքի լեռնային շրջանները նշվում են խաչն (ք) կամ «կողմն խաչենոյ» անվանմամբ: Նոր դարաշրջանի պատմագրությունը նաև տարբերակում է Ներքին և Վերին խաչեն վարչաշխարհագրական անվանումները:

Իսկ ինչու՞ Ներքին և Վերին խաչեն: Եթե անվանումը կապ ունի խաչեն գետի հետ, ապա Ներքին և Վերին բաժանումները պետք է որ կատարվեն հենց դառ հովտի նկատմամբ, մինչդեռ իրականում դա այդպես չէ. Ներքին խաչենը ուշ միջնադարի խաչենի մեկնության տարածքին է համապատասխանում. Վերին Հաթնորի իշխանությանը:

Շատ հետաքրքիր է, որ խաչեն՝ նույնպես նշանակում է անտառ: «Հայերեն արմատական բառերան»-ի ստուգաբանությամբ «խաչ» նշանակում է ոչ միայն փայտ, այլև ծառ, կոճղ, ուտի, խաչենը կարելի է բացատրել խաչ+են, այսինքն՝ ծառերով հարուստ:

2. Հր. Աճառյան «Հայերենի արմատական բառարան», Հ. II, Երևան, 1971թ., էջ 293

Ահա, թերևս, Ներքին և Վերին խաչեն բաժանումների իմաստը դառնում է հասկանալի. ուշ շրջանի ֆեոդալական մասնատումների հետևանքով բուն Արցախ (Արծախ<Արցախ) լեռնային-անտառալիտ (թանձրամայրի) տարածքը բաժանվել է Առանշահիկ (Առանից սերված) իշխանների երկու ճյուղերի միջև և, աստիճանաբար, կորցնելով միասնական անվանումը, կոչվել Ներքին և Վերին խաչեն:

Ուշ միջնադարում կողմանք Արեւելից Հայոց աշխարհի նահանգն անվանվել է Ղարաբաղ: Պարզագույն բացատրությամբ դա նշանակում է Սև

ալգի (անտառ): Ուսումնասիրողներից ոմանք (Բ. Ուլուբաբյան, հատկապես), Ղարաբաղ անվանման առաջին բաղադրիչը հակված են բացատրել «մեծ» իմաստով՝ հղելով պարսկերենին:

Եթե համարենք, որ սա ճիշտ մեկնաբանություն է, կարելի է եզրակացնել, որ օտար նվաճողները դարձյալ հայերեն անվանումը թարգմանել են: Եվ Արցախ (Արծախ<Արցախ), եւ խաչեն(ք) տեղանուններն, ինչպես ասվեց վերևում, ունեն նույն՝ անտառ բնութագրիչը, որը Ղարաբաղ օտար անվանման է փոխանցվել իմաստային առումով:

Հավանական է, որ տեղաշրջանի անվանման հետագա ստորակարգումը՝ Դաշտային եւ Լեռնային Ղարաբաղ, նույնպես պայմանավորված է նրանով. որ վաղնջական ժամանակներից սկսած այն, ինքը, երկու անվանում է ունեցել՝ Առանի անտառ < Արցախ (Արծախ<Արցախ) եւ Դաշտն Առանայ < Աղուանք < Արան:

О взаимосвязанности административно-географических топонимов Арцах, Хачен и Карабах
Женя Ромаевна ПОГОСЯН
РЕЗЮМЕ

Статья “О взаимосвязанности административно-географических топонимов “Арцах”, “Хачен” и “Карабах” имеет целью идентификацию упомянутых топонимов на основе этимологического сопоставления морфем “дах”, “хач” и “бар(х)”, которые означают одно и то же – дерево(лес). Вывод: топоним “Карабах” является простым переводом с армянского.